532Բ

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«07» 05 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 117 - 25

Նախաձեռնողը՝ *«ԿՐՈՒՍՏԱ» ՍՊԸ*
Ք. Երևան, Նոր-Նորք, մոլդովական փ., շ. 27Ա

Գործունեությունը՝ *Գեղարդի անդեզիտաբազալտի հանքավայրի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն*
Կոտայքի մարզ

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 117 - 25

«07» մայիսի **2025թ.**

Գեղարդի անդեզիտաբազալտի հանքավայրի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«ԿՐՈՒՍՏԱ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթուղթ /Ա կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Կոտայքի մարզ, Գառնի համայնք, Գառնի բնակավայր

Ներածական մաս. Կոտայքի մարզի Գեղարդի անդեզիտաբազալտի հանքավայրը գտնվում է Կոտայքի մարզի Գառնի համայնքի Գառնի բնակավայրի վարչական տարածքում: Գառնի բնակավայրի բնակելի շինությունները գտնվում են հայցվող տարածքից 5.2 կմ, Գեղարդ բնակավայրի մոտակա բնակելի շինությունները՝ 2.2 կմ, Գողթ բնակավայրի բնակելի շինությունները՝ 3.6 կմ հեռավորությունների վրա:

Հայցվող տարածքի հողերը ներկայացված են համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսքերով:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի թ. ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը դասակարգվում է որպես Ա կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Կոտայքի մարզի Գեղարդի անդեզիտաբազալտների հանքավայրի պաշարները բացահանքի սահմաններում 01.01.1985 թվականի դրությամբ հաստատվել են ՀԽՍՀ ՊՏՀ-ի 29.11.1985 թվականի N 280 արձանագրությամբ հետևյալ քանակությամբ:

02543163 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

Բլոկի համարը և կարգը	Ծավալը, հազ.մ³			
	ժայռային մակաբացում	անդեզիտաբազալտ, պատքար	խարամացված անդեզիտաբազալտ	Ընդամենը ըստ բլոկների
1- A	32.4	229.1	156.0	417.5
2- B	60.0	401.4	149.4	610.8
3- C1	79.3	736.0	272.4	1087.7
Ընդամենը A+B+C1	171.7	1366.5	577.8	2116

Հանքավայրի անդեզիտաբազալտները որպես հումք պատքարի և երեսապատման բլոկների համար լիովին բավարարում են РСТ Арм ССР 1102-79 և ГОСТ 9479-84 պահանջներին: Խարամացված անդեզիտաբազալտները բավարարում են ГОСТ 22132-76 որպես խամքարի և ГОСТ 8267-82 որպես խճի և ավազի արտադրության համար պահանջներին:

Ելնելով հանքավայրի տեղադիրքից, հանքամարմնի տեղադրման պարամետրերից և մակաբացման ապարների ոչ մեծ ծավալներից՝ տեղամասի մշակումը նախատեսվում է բաց լեռնային աշխատանքներով: Հանքարդյունահանման աշխատանքները նախատեսվում է կատարել մեխանիկական եղանակով՝ էքսկավատորի հենքի վրա տեղադրված հիդրավլիկ մուրճով:

Բացահանքը վերջնական դիրքում կունենա հետևյալ պարամետրերը՝

- ամենամեծ երկարությունը՝ 630 մ,
- ամենամեծ լայնությունը՝ 255 մ,
- բացահանքի առավելագույն խորությունը՝ 43 մ,
- մակաբացման ապարների միջին հզորությունը նախագծվող տեղամասի սահմաններում– 2.61մ (այդ թվում՝ հողաբուսական շերտ 0.79 մ, ալյուվիալ դելյուվիալ առաջացումներ 0.99 մ),
- փուշտա (ժայռային մակաբացում) ՝ 0.83 մ (պաշարները հաստատված են),
- անդեզիտաբազալտներ՝ 8.16 մ,
- խարամացված անդեզիտաբազալտներ՝ 3.54 մ,

բացահանքի սահմաններում արդյունահանվող ապարների ծավալը ՝

- հողաբուսական շերտ՝ 55845 մ³ ,
- ալյուվիալ-դելյուվիալ առաջացումներ՝ 69984 մ³,
- փուշտա (ժայռային մակաբացում)՝ 56853 մ³,
- անդեզիտաբազալտներ՝ 566708 մ³,
- խարամացված անդեզիտաբազալտներ՝ 260515 մ³,
- հիմնատակող ապարներ՝ 41795 մ³:

Բացահանքի տարեկան արտադրողականությունն ըստ անդեզիտաբազալտների արդյունահանման կազմում է 45000 մ³:

Բացահանքի օտարման մակերեսը – 70697 մ² (մոտ 7.1 հա) է:

Բացահանքի ծայրակետային կոորդինատները ARM WGS – 84 (ARMREF 02) համակարգով (70697մ²) հետևյալն են.

1. X=4449105.0000, Y=8481392.0000
2. X=4449216.4400, Y=8481438.3727
3. X=4449456.9162, Y=8481909.9991

4. X=4449255.5779, Y=8482065.9698

5. X=4449262.9984, Y=8481706.0760

Բացահանքի բացումը կատարվելու է հանքավայրի արևմտյան մասից անցնող, գոյություն ունեցող գրունտային ավտոճանապարհի 2119 մ բարձրության նիշից մինչև բացահանքի 2140 մ բարձրության նիշ ունեցող հորիզոն մոտեցող գրունտային ճանապարհի անցումով: 2140-2120 մ նիշ ունեցող հորիզոնների բացումն իրականացվելու է տվյալ գրունտային մոտեցող ավտոճանապարհից՝ հորիզոնական կտրող կիսախրամների անցումով: Մոտեցող ավտոճանապարհի երկարությունը՝ 705 մ է, լայնությունը՝ 710 մ: Առավելագույն հաղթահարվող թեքությունը՝ 100%:

Հանքավայրից հայցվող տարածքի մշակման համար ընտրվել է ընդլայնական, միակողմանի խորացմամբ մշակման համակարգ:

Հողաբուսաշերտի հզորությունը կազմում է միջինը 0.5 մ:

Մակաբացման ապարները՝ 2140-2130 մ նիշ ունեցող հորիզոնների շահագործման ընթացքում տեղափոխվելու են արտաքին ժամանակավոր լցակույտ և տեղադրվելու են առանձին-առանձին:

Հողաբուսական շերտը տեղադրվելու է բացահանքի արևելյան մասում, իսկ ալյուվիալ-դելյուվիալ առաջացումները՝ բացահանքի հարավային մասում:

2125-2102 մ հորիզոնների շահագործման ընթացքում մակաբացման ապարները՝ 73792 մ^3 ընդհանուր ծավալով, տեղադրվելու են նշված հորիզոնների վրա և հարթեցվելու են՝ ձևավորելով ներքին լցակույտ:

Մակաբացման ապարները կուտակվելու են շահագործվող հանքաստիճանի հատակին, որից հետո բարձվելու են ավտոինքնաթափը և տեղափոխվելու են միջինը 0.7 կմ հեռավորության վրա գտնվող արտաքին ժամանակավոր լցակույտ:

Արդյունաբերական հրապարակի մակերեսը կկազմի 350 մ^3:

Հողաբուսական շերտի արտաքին ժամանակավոր լցակույտի մակերեսը կազմելու է 11106 մ^2, միջին բարձրությունը՝ 2.1 մ:

Ալյուվիալ-դելյուվիալ առաջացումների արտաքին ժամանակավոր լցակույտի հիմքի մակերեսը կկազմի 14360 մ^2, վերին հարթակի մակերեսը՝ 11387 մ, առավելագույն բարձրությունը՝ 5 մ:

Ներքին լցակույտի մակերեսը կազմելու է 61340 մ^2, միջին բարձրությունը՝ 3.66 մ, որից հիմնատակող ապարները՝ 0.68 մ, ալյուվիալ-դելյուվիալ առաջացումները՝ 1.14 մ, հողաբուսական շերտը՝ 0.91 մ:

Հանքավայրի տարածքում աղմուկի առաջացման աղբյուրներ կարող են հանդիսանալ բացահանքի տարածքում կատարվող արդյունահանման աշխատանքները, հումքի և արտադրական թափոնների բարձման և տեղափոխման աշխատանքները, լցակույտի ձևավորումը, ճանապարհներին տրանսպորտի տեղաշարժը: Սակայն, քանի որ դրանց ինտենսիվությունը շատ ցածր է, հետևաբար աղմուկի մակարդակը նույնպես բարձր չէ: Հաշվարկներով հիմնավորվել է, որ աղմուկի և թրթռման մակարդակը կգտնվի թույլատրելի նորմերի սահմաններում:

Բացահանքի մատակարարումը տեխնիկական ջրով կատարվելու է ZIL-130 (KO-002) ջրցան մեքենայով, պայմանագրային հիմունքներով: Խմելու ջրի մատակարարումը կատարվելու է ШН-БЦБ-1.4 ջրի ցիստեռնով:

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Ռեկուլտիվացիայի ընդհանուր մակերեսը կկազմի 6.16 հա: Լեռնատեխնիկական ռեկուլտիվացիայից հետո իրականացվելու է կենսաբանական ռեկուլտիվացիա:

Ամբողջ ռեկուլտիվացիայի արժեքը կազմելու է 2867900 ՀՀ դրամ, որից կենսաբանական վերականգնման փուլի համար նախատեսվում է 983.5 հազ. ՀՀ դրամ:

Ըստ հաշվետվությունում եղած տեղեկատվության՝ հայցվող տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ չեն դիտարկվել, պատմության, բնության հուշարձաններ գործունեության իրականացման տարածքում առկա չեն:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- Նավթամթերքները պահեստավորվելու և պահվելու են արտադրական հրապարակում հատուկ հատկացված տեղում (բացօթյա կամ ծածկի տակ կազմակերպված պահեստ), որին տրվելու է համապատասխան թեքություն, որն ապահովելու է թափված նավթամթերքների հոսքը դեպի այն հավաքող բետոնապատված փոսը,
-կենցաղային աղբը տարանջատված հավաքվելու է հատուկ անթափանց տարողությունների մեջ, տեղափոխվելու է մոտակա կազմակերպված աղբավայր՝ համապատասխան ծառայություն մատուցող կազմակերպության ուժերով՝ կնքված պայմանագրի հիման վրա,
-փոշենստեցման նպատակով իրականացվելու է փոշեառաջացման օջախների ինտենսիվ ջրում տարվա չոր և շոգ եղանակներին,
- կեղտաջրերը հավաքվելու են բետոնապատ հորատիպ զուգարանում, որը պարբերաբար դատարկվելու է հատուկ ծառայության ուժերով: Աշխատանքների ավարտից հետո դատարկված փոսը լցվելու է քարերով, տարածքը հարթեցվելու է,
-արտադրական տարածքը կանաչապատվելու է պաշտպանիչ ծառաշերտի ձևավորմամբ, տարածաշրջանին բնորոշ արագ աճող, չորասեր թփերով կամ գաճաճ ծառերով,
-շահագործման ավարտից հետո արտադրական հրապարակի տարածքից հեռացվելու են վագոն-տնակները, սարքավորումները, գույքը/ապրանքները: Արտադրական հրապարակի տարածքը մաքրվելու է աղբից, կատարվելու է փխրեցման և հարթեցման աշխատանքներ:
- օգտակար հանածոյի արդյունահանումից հետո իրականացվելու է խախտված տարածքների ռեկուլտիվացիա:

Աշխատանքների իրականացման ընթացքում ընկերությունն իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

-մթնոլորտային օդի որակի պարբերական մշտադիտարկումներ՝ շաբաթական մեկ անգամ,

-օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով արդյունաբերական հրապարակի տարածքի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով մշտադիտարկումներ՝ ամսական մեկ անգամ,

-լցակայտերում պահեստավորված հողաբուսական շերտի քիմիական կազմի և հումուսի պարունակության մշտադիտարկում՝ տարեկան մեկ անգամ,

-աղմուկի վերահսկողություն՝ տարեկան մեկ անգամ,

-կենսաբազմազանության ուսումնասիրություն, նկարագրում՝ տարածքին բնորոշ վայրի բնության ներկայացուցիչների քանակի, ածելավայրերի և ապրելավայրերի տարածքի,

պոպուլյացիայի փոփոխություն (դիտարկումը կատարվելու է հանքավայրում և հարակից տարածքներում)՝ տարեկան մեկ անգամ:

Մշտադիտարկման նպատակով ընկերությունը նախատեսում է տարեկան մասնահանել 2190.0 հազ. ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Կոտայքի մարզի Գեղարդի անդեզիտաբազալտի հանքավայրի արդյունահանման աշխատանքների վերաբերյալ իրականացվել են հանրային լսումներ Կոտայքի մարզի Գառնիի համայնքապետարանում, որոնց ընթացքում մասնակիցները հավանություն են տվել նախատեսվող գործունեության իրականացմանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն, Կոտայքի մարզպետարանը, Գառնիի համայնքապետարանը: Նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները կկրեն ժամանակավոր բնույթ և բնապահպանական միջոցառումների իրականացման արդյունքում կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Արդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում պարբերաբար իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների մոնիթորինգ և արդյունքները Կառավարության 2018թ. փետրվարի 22-ի N191-Ն որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն:
- Աշխատանքների իրականացման ընթացքում խստագույնս հետևել գնահատման հաշվետվությունում ամրագրված բնապահպանական միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ապահովելով բնապահպանական նորմերը:
-Փոշենստեցման նպատակով իրականացնել գործունեության իրականացման տարածքի փոշեառաջացման օջախների ջրցան՝ օդի դրական ջերմաստիճանի դեպքում, օրվա ընթացքում պարբերաբար:
- Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ շահագործման աշխատանքների ավարտից երկու տարի առաջ, հանքի փակման ծրագիրը ներկայացնել շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:
- ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազոր մարմնին՝ համապատասխան պահպանման միջոցառումներ իրականացնելու համար:

02543163 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ԿՐՈՒՍՏԱ» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված Գեղարդի անդեզիտաբազալտի հանքավայրի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ Սևակ Մարկոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝ Գոհար Մինասյան